ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/79

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով

Բողոքաբեր՝ «Փրոմոուշն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Ն. Դավթյանի

Բողոքաբերի ներկայացուցիչ՝ Հ. Հովհաննիսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցում, մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Փրոմոուշն» ՍՊԸ-ի, (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 01.11.2019թ.-ին ներկայացված բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ «Փրոմոուշն» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել «ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ թիվ 2 արձանագրության 5.1-կետով թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշումները:
2. Չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 01.11.2019թ.-ն և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, իսկ 06.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 06.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 20.11.2019թ.-ին:

2. <u>«Փրոմոուշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Փրոմոուշն» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի հոկտեմբերի 15-ին մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների ձեռքբերման նպատակով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի /այսուհետ՝ Պատվիրատու/ կողմից հայտարարվել է ՀՀ ՏՄ՛ՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետ՝ Ընթացակարգ/, որին մասնակցության հայտ են ներկայացրել «Լաճ Գրուպ», «Աութսորս» և «Փրոմոուշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները: Ընթացակարգի հայտերի բացման նիստի վերաբերյալ 2019 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 2 արձանագրության /կցվում է/ 5"1-րդ կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել ընտրված մասնակից ճանաչել «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ին, իսկ Ընթացակարգի հայտերի գնահատման նիստի վերաբերյալ 2019 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 3 արձանագրության /կցվում է/ 2-րդ կետով որոշում է կայացվել կնքել պայմանագիր «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ի հետ: «Փրոմոուշն» ՍՊԸ-ն /այսուհետ՝

Ընկերություն/ համաձայն չէ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների հետ և գտնում է, որ այն հիմնավորված չէ:

Ընթացակարգի հրավերի վերլուծությունից հետևում է, որ Պատվիրատուն ընթացակարգը կիրառելիս հիմք է ընդունել «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 15-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն.

«Եթե գնման գինը գերազանցում է տվյալ ժամանակահատվածում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ապա պայմանագիր կնքվելու դեպքում տվյալ ժամանակահատվածին հաջորդող ժամանակահատվածում նախատեսվում են ֆինանսական միջոցներ գնման պայմանագրով սահմանված գնումն իրականացնելու կամ տվյալ գնումը ժամանակավորապես դադարեցնելու համար»: Միևնույն ժամանակ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ ենթակետը սահմանում է, որ գնման գինը ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվարկված նախահաշվային գինն է:

Ցանկանում ենք բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Պատվիրատուի գնման պլանում տվյալ ընթացակարգի համար սահմանված նախահաշվային գինը կազմել է 300 000 ՀՀ դրամ: Փաստացի Ընթացակարգի երեք մասնակիցների ներկայացված գնային առաջարկները գերազանցել են Պատվիրատուի կողմից տվյալ Ընթացակարգի համար սահմանված նախահաշվային գինը: Մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 2 արձանագրության մեջ նշված չէ գնման ընթացակարգի նախահաշվային գինը, չնայած այն հանգամանքի, որ Հրավերի 1-ին մասի 7.1-րդ կետի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովի նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը: Իսկ ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որ սահմանում է, որ ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե առաջարկված նվազագույն գների հավասար են կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային

առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Տվյալ պարագայում առկա չէ վերը թվարկված հիմքերից և ոչ մեկը:

Վերը նշված իրավանորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ Ընթացակարգի մասնակիցների հետ պետք է վարվեին գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ, ինչը չի իրականացվել, որի արդյունքում խախտվել են Ընկերության շահերը:

2.2. Ընթացակարգի անցկացման ընթացքում թույլ են տրվել մի շարք խախտումներ, մասնավորապես.

ա) հայտերի բացման նիստի վերաբերյալ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 2 արձանագրության 5.1-րդ կետով որոշում է կայացվել «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից, մինչդեռ Ընթացակարգի մասնակիցը կարող է ճանաչվել ընտրված միայն այն դեպքում, երբ գնահատման նիստի արդյունքներով վերջինիս որակավորումը գնահատվում է բավարար: Տվյալ դեպքում մասնակից պետք է դեռևս ճանաչվեր միայն որպես 1-ին տեղ զբաղեցնող.

բ) Հրավերում առկա պայմանագրի նախագծի վճարման ժամանակացույցով սահմանված է, որ վճարումները 100%-ով կիրականացվեն 2019 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, ինչը հակասում է հրավերի տրամանաբանությանը այնքանով, որ տվյալ դեպքում կիրառվել է Օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները և տվյալ տարում վճարման է ենթակա միայն պայմանագրի արժեքի միայն մի մասը: Տվյալ պարագայում անհասկանալի է՝ ինչ սկզբունք է կիրառել Պատվիրատուն:

գ) Հրավերի 1-ին մասի 7.26-րդ կետի համաձայն.

«Ընտրված մասնակցին որոշելու նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝...

2) Համակարգի միջոցով ընթացակարգի մասնակիցների էլեկտրոնային փոստին ուղարկում է գնահատման արդյունքների մասին հանձնաժողովի նիստի արձանագրու¬թյունը;»: Տվյալ պարագայում Պատվիրատուի կողմից չի պահանջվել վերը նշված նորմի պահանջները և մեր Ընկերություն պատշաճ չի ծանուցվել Ընթացակարգի ընթացքի և կայացված որոշումների մասին, ինչը փաստացի զրկել է Ընկերությանը ժամանակին արձագանքել Պատվիրատուի կողմից կայացված որոշումներին:»:

Ելնելով վերոգրյալից, «Փրոմոուշն» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Դադարեցնել «ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ թիվ 2 արձանագրության 5.1-կետով թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշումները:

2. Չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

3. <u>ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՀՀ ՏՄՊՊՀ) կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.11.2019թ.-ին թիվ 241-ՆԳ գրությամբ դիմել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Փրոմոուշն» ՍՊԸ-ի կողմից 01.11.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 05.11.2019թ.-ի գրությամբ ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից սույն թվականի հոկտեմբերի 15-ին հայտարարված «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել «Լաճ Գրուպ», «Աութսորս», «Փրոմոուշն» ՍՊԸ-ները:

1. Հարկ է նշել, որ հրավերի համաձայն ընթացակարգը իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա, տվյալ ժամանակահատվածում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում գնման պայմանագրով սահմանված գնումն իրականացնելով՝ համաձայնագրի հիման վրա:

«Եթե գնման գինը գերազանցում է տվյալ ժամանակահատվածում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ապա պայմանագիր կնքվելու դեպքում տվյալ ժամանակահատվածին հաջորդող ժամանակահատվածում նախատեսվում են ֆինանսական միջոցներ գնման պայմանագրով սահմանված գնումն իրականացնելու կամ տվյալ գնումը ժամանակավորապես դադարեցնելու համար (եթե ժամանակավոր դադարեցումը պահանջում է ֆինանսական միջոցներ)»:

Համաձայն ընթացակարգի Տեխնիկական բնութագիր-Վճարման ժամանակացույցի Ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ»: Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ ծառայության մատուցումը նախատեսված է եղել շուրջ 14 ամիսների համար՝ կախված Պայմանագրի կնքման ժամկետից:

Հայտերի բացման նիստում ի հայտ է եկել, որ նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն՝ 400.000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից տեղեկագրում հրապարակված 2019 թվականի գնումների պլանով նախատեսված է եղել 300.000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ նախահաշվային արժեք մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների համար:

Վերոնշյալ փաստերից հետևում է, որ «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի գերազանցում 2019 թվականի նախահաշվային արժեքը, այլ կազմում է շուրջ 29.000 /քսանինը հազար/ ՀՀ դրամ յուրաքանչյուր ամսվա համար:

Քանի որ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի գինը չի գերազանցում 2019 թվականի գնումների պլանով սահմանված նախահաշվային արժեքը, ՀՀ Կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը կիրառելի չէ:

2. Հրավերի վճարման ժամանակացույցում նշված 100%-ի չափով վճարումները վերաբերվում են միայն 2019 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին նշված ծառայություններին: Պայմանագիրը 2020 համար կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա, տվյալ ժամանակահատվածում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում գնման պայմանագրով սահմանված գնումն իրականացնելով՝ համաձայնագրի հիման վրա, ինչը և նշված է հրավերում:

3. Հրավերի վերաբերյալ ցանկացած արձանագրություն «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում հրապարակվել է տեղեկագրում, որտեղ և ցանկացած հետաքրքրված անձ կարող է ստանալ տեղեկատվություն ընթացակարգի վերաբերյալ:»:

4. <u>ԳԲԲԱ-ԼՕ-2019/79 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՀՀ ՏՄՊՊՀ) կողմից մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների ձեռքբերման նպատակով 15.10.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) վճարման ժամանակացույցով սահմանվել է, որ ծառայությունների մատուցման համար 100%-ի չափով վճարումները կկատարվեն 2019թ.-ի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, իսկ 2020թ.-ի համար պայմանագիրը կնքվելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա, տվյալ ժամանակահատվածում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում գնման պայմանագրով սահմանված գնումն իրականացնելով՝ համաձայնագրի հիման վրա:

armeps.am/PPCM/ կայքում առկա տվյալների համաձայն՝ Ընթացակարգի համար գնումների պլանով նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրով (98111120) 2019թ.-ի համար նախատեսվել է 300 000 ՀՀ դրամ գումարի չափով ֆինանսական միջոց:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն, «Աութսորս» ՍՊԸ-ն և «Փրոմոուշն» ՍՊԸ-ն:

«Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն, ուսումնասիրելով «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որպես պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գումար, ներկայացրել է 400 000 ՀՀ դրամ գումարի չափով գնային առաջարկ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.10.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասի դրույթները, որոշել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Հանձնաժողովի 28.10.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների դրական պատասխանն ու մասնակցի ֆինանսական միջոցների հրավերի պահանջներին համապատասխանությունը, որոշել է ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչել «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն և սահմանված կարգով առաջարկ ներկայացնել պայմանագիր կնքելու համար:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Փրոմոուշն» ՍՊԸ-ի կողմից 01.11.2019թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք

հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում

գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ…:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում Հանձնաժողովը հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների ձեռքբերման նպատակով 15.10.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի վճարման ժամանակացույցով սահմանվել է, որ ծառայությունների մատուցման համար 100%-ի չափով վճարումները կկատարվեն 2019թ.-ի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, իսկ 2020թ.-ի համար պայմանագիրը կնքվելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա, տվյալ ժամանակահատվածում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում գնման պայմանագրով սահմանված գնումն իրականացնելով՝ համաձայնագրի հիման վրա:

armeps.am/PPCM/ կայքում առկա տվյալների համաձայն՝ Ընթացակարգի համար գնումների պլանով նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրով

(98111120) 2019թ.-ի համար նախատեսվել է 300 000 ՀՀ դրամ գումարի չափով ֆինանսական միջոց:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ ներկայացրած «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն, ուսումնասիրելով «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որպես պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գումար, ներկայացրել է 400 000 ՀՀ դրամ գումարի չափով գնային առաջարկ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.10.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասի դրույթները, որոշել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Հանձնաժողովի 28.10.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների դրական պատասխանն ու մասնակցի ֆինանսական միջոցների հրավերի պահանջներին համապատասխանությունը, որոշել է ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչել «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն և սահմանված կարգով առաջարկ ներկայացնել պայմանագիր կնքելու համար:

Բողոքներ քննող անձը, վերոնշյալներով պայմանավորված, փաստում է, որ՝

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն, ուսումնասիրելով «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որպես պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գումար, ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ՝ 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2019թ.-ի համար նոյեմբեր ու դեկտեմբեր ամիսների և 2020թ.-ի ամբողջ տարվա համար (14 ամիս՝ ամսական շուրջ 29 000 (քսանինը հազար) ՀՀ դրամ գումար):

Իսկ armeps.am/PPCM/ կայքում առկա տվյալների համաձայն՝ Ընթացակարգի համար գնումների պլանով նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրով (98111120) 2019թ.-ի համար նախատեսվել է 300 000 ՀՀ դրամ գումարի չափով ֆինանսական միջոց, որով և պայմանավորված «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի գերազանցել 2019 թվականի նախահաշվային արժեքը, որպիսի

պայմաններում ՀՀ Կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը կիրառելի չէ:

Անդրադառնալով Բողոքով բարձրացված Հանձնաժողովի կողմից Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի դրույթների խախտմանը, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ սույն գործում առկա փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ հայտերի բացման նիստում նախագահի (նիստը նախագահողի) կողմից գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գինը չհրապարակելու արդյունքում, Հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ:

Սակայն, Հանձնաժողովի կողմից Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի դրույթների խախտումը սույն դեպքում, չի կարող գնահատվել, որպես գործի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանք, քանի որ՝ թե Ընթացակարգի մասնակցության հայտեր ներկայացրած, թե առավել ևս Բողոք ներկայացրած անձի գնման գործընթացի որևէ իրավունք չի խախտվել, հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմանների որևէ սահմանափակում, ինչպես նաև գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ չեն առաջացել, որն էլ կարող էր հանգեցնել մասնակիցների իրավունքների խախտմանը, որպիսի պայմաններում «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու համար բավարար հիմքեր առկա չեն:

Սույն գործում առկա փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ Պատվիրատուն, գնման ընթացակարգն Օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասով հայտարարելու արդյունքում, գնման հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմանների որևէ սահմանափակում, ինչպես նաև գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ չի առաջացրել, որին էլ մասնակցության հայտ է ներկայացրել 3 (երեք) մասնակից, որպիսի պայմաններում «ՀՀ ՏՄՊՊՀ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու համար բավարար հիմքեր առկա չեն:

Ինչ վերաբերում է բողոքով նշված մասնակցին ընտրված մասնակից ճանաչելու հանգամանքին, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովի կողմից 22.10.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է ոչ թե ընտրված այլ՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, որը հաստատվում է Հանձնաժողովի կողմից նույն արձանագրությամբ ՀՀ ՊԵԿ հարցում կատարելու և հետագայում

Հանձնաժողովի 28.10.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ՝ մասնակցին հաղթող/ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշմամբ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընկերության կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքներն անհիմն են, իսկ Պատվիրատուի գործողությունների արդյունքում չեն սահմանափակվել և խախտվել մասնակիցների ՀՀ գնումների օրենսդրությամբ սահմանված իրավունքները, որպիսի պայմաններում ապահովվել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Փրոմոուշն» ՍՊԸ-ի կողմից 01.11.2019թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2019/79 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**